ՎԵՐՆԱՏՈՒՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆ

Վերնատունը գրական ակումբ էր, որը հիմնադրել էր մեծանուն գրող Հովհաննես Թումանյանը 1899 թվականին՝ իր թիֆլիսյան տան վերնահարկում:

Այն հայ մտավոր կյանքի խորհրդանիշն էր՝ վայր, որտեղ ժամանակի մեծերը հավաքվում էին կիսվելու գաղափարներով, ընթերցելու և զրուցելու հայրենիքի, արվեստի ու գրականության մասին:

Վերնատան հիմնադիր անդամներն էին Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը և Ղազարոս Աղայանը: Նրանց հանդիպումները կանոնավոր բնույթ էին կրում՝ մտքեր փոխանակելու, ստեղծագործելու և ամբողջ մի մշակութային դարաշրջան ձևավորելու համար:



ձախից աջ՝ Ավետիք Իսահակյան, Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան (նստած), Լևոն Շանթ, Դերենիկ Դեմիրճյան (կանգնած)

Դմիտրի Նալբանդյան, «Վերնատուն», 1974-1976 թթ.

Տերյան 11 հասցեում գտնվող Աֆրիկյանների ակումբ, 1971թ.

«ԿԵՐՈՆ»-Ի «ՎԵՐՆԱՏԱՆ» ՈԳԵԾՆՉՈՒՄ

- Թումանյանական Վերնատունը դարձավ հայ մտավոր կյանքի խորհրդանիշը, որտեղ հավաքվում էին ժամանակի մեծերը՝ մտքեր փոխանակելու, ընթերցելու, բանավիճելու և զրուցելու հայրենիքի, արվեստի և գրականության մասին:

- Տերյան 11 հասցեում գտնվող Աֆրիկյանների ակումբը կառուցվել էր 19-րդ դարի վերջին նշանավոր Աֆրիկյան եղբայրների կողմից: Այստեղ հավաքվում էին արվեստի և հանրային գործիչներ, գործարարներ և հայտնի երևանցիներ: Վերջիններս ակումբում մի գավաթ սուրճի շուրջ քննարկում էին ժամանակի օրակարգային խնդիրներ:

- Խորհրդային տարիներին, հասարակական-քաղաքական գործունեության սահմանափակումների պայմաններում, մի խումբ երիտասարդ մաթեմատիկոսներ ազգային համախմբման ուղիներ էին որոնում, որոնց ամենանշանավոր դրվագներից մեկը 1979–1981 թթ. Ծաղկաձորում անցկացվող մտավորականների ամենամյա հավաքներն էին՝ միավորելով ժամանակի առաջատար մշակութային, գիտական և հոգևոր դեմքերին: Նրանց թվում էին բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, քանդակագործներ Արա Շիրազը և Երվանդ Քոչարը, մաթեմատիկոս Սերգեյ Մերգելյանը, ճարտարապետ Արմեն Զարյանը, գրող Սերո Խանզադյանը, ազգագրագետ Հայրիկ Մուրադյանը, մանկական արվեստի թանգարանի հիմնադիր տնօրեն Հենրիկ Իգիթյանը, հայ մեծանուն երգչուհի Լուսինե Զաքարյանը և այլոք:

- Եվրոպական սալոնային մշակույթը ևս ենթադրում էր փակ հավաքներ և հանդիպումներ, որտեղ տարբեր միջավայրերի և հասարակության շերտերի ներկայացուցիչներ բաց ու ազատ քննարկում էին արվեստը, գրականությունը, փիլիսոփայությունը, երաժշտությունն ու քաղաքականությունը:

ՎԵՐՆԱՏՈՒՆ

Պատմական ակումբային ոգին այսօր նորովի վերածնվում է
«Կերոն»-ի «Վերնատանը»

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը համայնք է Երևանի եզակի պատմական առանձնատներից մեկում: Այն յուրօրինակ փորձառությունների, զրույցների և գաղափարների շուրջ համախմբում է նախաձեռնող, նույն արժեքները կիսող և ոչ անտարբեր անհատներին, ովքեր հավատում են երկխոսության ուժին:

Հասցե՝ Պուշկինի 38

Դիտել տեսանյութը

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը գտնվում է Պուշկին 38 հասցեում, որը հայտնի է որպես Առաքել Աֆրիկյանի առանձնատուն:

Շենքը կառուցվել է 1902 թվականին ճարտարապետ Վասիլի Միրզոյանի կողմից:

Այսօր այն ներառված է Երևանի պատմամշակութային հուշարձանների ցանկում: Առանձնահատուկ արժեք են ներկայացնում նկարազարդ առաստաղները և սալիկապատ բուխարիները:

Դիտել տեսանյութը

«ԿԵՐՈՆ»-Ի «ՎԵՐՆԱՏԱՆ» ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Ավանդույթ

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը շարունակում և վերաիմաստավորում է հայ մտավոր հավաքների ժառանգությունը՝ պահպանելով գաղափարների, արժեքների և ստեղծարար մտածողության շարունակականությունը սերունդների միջև:

Պատկանելիություն

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը վստահության և երկխոսության վրա կառուցված միջավայր է, որտեղ ձևավորվում է արժեքահեն համայնք:

Նրբաճաշակություն

Այստեղ ձևավորվում է անհատների շրջանակ, որն առանձնանում է մտածողությամբ, ստեղծարարությամբ և արժեքներով, իսկ զրույցները, գաղափարները և միջավայրը մտածված են նպատակային և նրբաճաշակ մոտեցմամբ:

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը մտավորական ակումբների հայկական ավանդույթի ժամանակակից վերաիմաստավորումն է:

«Կերոն»-ի «Վերնատուն»-ը միջավայր է, որի անդամները միավորվում են ոչ թե կոչումներով, այլ արժեքներով, տեսլականով և ներդրումով:

Տարածքի, միջոցառումների և համայնքի հասանելիությունն ամբողջությամբ հնարավոր է **տարեկան անդամակցության** միջոցով:

«Կերոն»-ի «Վերնատան» օրակարգը ձևավորվում է հատուկ միջոցառումների, մտերմիկ հանդիպումների և գործընկերների նախաձեռնած գաղափարների շուրջ:

Կկազմակերպվեն բովանդակային տարաբնույթ հանդիպումներ՝ առաջնահերթությունը տալով իմաստալից և որակյալ մասնակցությանը, այլ ոչ թե մասշտաբին: Ժամանակ առ ժամանակ, ոչ միայն առկա, այլև հիբրիդ և առցանց ձևաչափերով միջոցառումները կկապեն «Վերնատան» աշխարհասփյուռ անդամներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Միջոցառումներ, քննարկումներ, զրույցներ, ընթրիքներ, որոնք մեկտեղում են մտածող, առաջադեմ, ստեղծարար մարդկանց մտքերի ու գաղափարների փոխանակումը: Սալոնային փոքր հավաքներից և բանավեճերից մինչև մեծ միջոցառումներ և ընդունելություններ:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Երաժշտություն, գրականություն, կատարողական արվեստ և ավելին. միջոցառումներ, որոնք խթանում են ստեղծարար ոգին՝ միաժամանակ այն կապելով աշխարհի հետ և ավանդույթը վերածելով կենդանի ու զարգացող փորձառության:

ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Անդամների կողմից նախաձեռնած հանդիպումներ, թեյախմություններ, երեկոյան զրույցներ, արտագնա հավաքներ, միջոցառումներ, որոնք ամրապնդում են կապն ու վստահությունը: Սա այն ամենօրյա ռիթմն է, որը «Վերնատունը» կենդանի է պահում որպես համայնք, այլ ոչ թե միայն տարածք:

«Կերոն»-ի «Վերնատան» սենյակները կրում են պատմական Վերնատան անդամների անունները՝

«Թումանյան» սրահ

«Աղայան» սրահ

«Դեմիրճյան» սրահ

«Իսահակյան» պատշգամբ

«Շանթ» սրահ

Նախասրահ. «Աղայան» սրահ

Առանձնասենյակ. «Դեմիրճյան» սրահ

«Կերոն»-ի «Վերնատան» անդամակցության յուրաքանչյուր տեսակ ունի խորհրդանշական իմաստ, որը կապված է աճի և ներդրման գաղափարի հետ:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

Փորձառու պրոֆեսիոնալներ, ստեղծագործողներ և առաջնորդներ, ովքեր կազմում են «Վերնատան» համայնքի հիմնական շրջանակը և ակտիվորեն մասնակցում են դրա գործունեությանը:

Տարեկան վճար
1 200 000 Դ

Մուտքավճար
400 000 Դ

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Մինչև 30 տարեկան մասնագետներ, ովքեր ստեղծում են զգալի հավելյալ արժեք իրենց ոլորտում:

Տարեկան վճար
600 000 Դ

Մուտքավճար
400 000 Դ

ԿԱՄՈՒՐՋ

Սփյուռքահայ կամ միջազգային անդամներ, ովքեր կապված են «Վերնատան» հետ թվային ներգրավվածության և երբեմն իրականացվող սահմանված քանակի օֆլայն այցելությունների միջոցով:

Տարեկան վճար
700 000 Դ

Մուտքավճար
400 000 Դ

*Անդամակցության այս ձևի դեպքում հնարավոր է նաև հովանավորչություն այլ անդամի կողմից:

ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ

2025 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2026 թ. մայիսի 1-ը կգործի անդամակցության նախավաճառք այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են դառնալ «Կերոն»-ի «Վերնատան» մասը նրա պատմության մեկնարկի պահից:

ՀԻՄՆԱԿԱՆ

Նախավաճառք
900 000 Դ

նվազեցված
մուտքավճարով՝
200 000 Դ

ԵՐԻՏԱՍԱՐԴ

Նախավաճառք
450 000 Դ

նվազեցված
մուտքավճարով՝
200 000 Դ

ԱՆԴԱՄԱԿՑԵԼ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Անդամները օգտվում են Վերնատան ֆիզիկական և թվային բոլոր տարածքներից:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԾՐԱԳՐԵՐ

Անդամները մասնակցում են Վերնատան ամբողջ միջոցառումների օրացույցին՝ սրահային երեկոներ, ընթրիքներ, երկխոսություններ, հետաքրքրությունների ակումբներ: Նրանք առաջնահերթության կարգով կստանան սահմանափակ թվով մասնակիցներով միջոցառումների և մասնավոր դիտումների հրավերները:

ՆԵԹՎՈՐՔԻՆԳ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերնատան համայնքը վստահելի ցանց է՝ առաջատար մասնագետներով և մտածողներով: Անդամները կարող են կապ հաստատել մոբայլ հավելվածի կամ միջոցառումների ընթացքում՝ համագործակցություններ կամ մենթորության կապեր ձևավորելով ոչ կոմերցիոն, պաշտպանված միջավայրում:

ԹՎԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Վերնատան հավելվածի միջոցով անդամները կարող են դիտել միջոցառումների օրացույցը, ամրագրել սենյակներ և տարածքներ, կապ հաստատել թիմի կամ այլ անդամների հետ, օգտվել ներքին հրապարակումներից, ձայնագրություններից և արխիվից:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Անդամները առաջնահերթ հասանելիություն են ստանում «Կերոն» հիմնադրամի ծրագրերին, ռեզիդենցիաներին և ռեթրիթներին, որոնք համահունչ են Վերնատան մշակույթի, կրթության և նորարարության էկոհամակարգին:

Որոշ ծառայություններ հասանելի կդառնան աստիճանաբար

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր գործընկերություն «Վերնատան» հետ ձևավորվում է անհատական մոտեցմամբ: Հստակ ձևաչափեր, առավելություններ և ներգրավվածության տարբերակներ սահմանվում են համատեղ՝ ապահովելով փոխադարձ արժեք, արդիականություն և երկարաժամկետ համագործակցություն: Ստորև ներկայացված առավելությունները ընդհանրական բնույթ են կրում և կարող են հարմարեցվել տվյալ գործընկերոջ հետաքրքրություններին ու առաջնահերթություններին:

ԲՐԵՆԴԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄ

Գործընկերները ճանաչվում են որպես «Վերնատան» աջակիցներ: Նրանց բրենդի ներկայությունը ներառվում է զգուշորեն, ոչ կոմերցիոն ձևով «Վերնատան» հարթակներում՝ կայք, մոբայլ հավելված, հատուկ հրավերներ, միասին նախաձեռնություններ, անհատականացված նյութեր և տեսանելիության այլ ձևաչափեր՝ միշտ համահունչ «Վերնատան» արժեքներին ու էսթետիկ չափանիշներին:

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործընկերները հնարավորություն ունեն «Վերնատան» հետ միասին ծրագրեր և միջոցառումներ մշակելու և կազմակերպելու: Յուրաքանչյուր նախաձեռնություն ձևավորվում է համատեղ՝ ապահովելու համար համապատասխանությունը, որակն ու կապը համայնքի, լսարանի և «Վերնատան» առաքելության հետ:

ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆԵՐԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Գործընկեր կազմակերպությունները կարող են առաջադրել իրենց թիմակիցներին՝ «Վերնատան» համայնքի մասը դառնալու համար՝ անցնելով ընդունելության և արժեքներին համապատասխանության սովորական գործընթացը: Սա հնարավորություն է տալիս ներգրավվել «Վերնատան» կյանքին, երկխոսություններին և հատուկ հավաքներին:

ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Գործընկերները կարող են օգտվել «Վերնատան» տարածքներից մասնավոր հանդիպումների, քննարկումների կամ համատեղ միջոցառումների համար՝ հաշվի առնելով համապատասխանությունը «Վերնատան» ոգուն ու գործառական կանոններին:

ՀՐԱՎԵՐՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Գործընկերները կարող են իրենց թիմերի, հյուրերի կամ շահառուների համար հրավերներ ձեռք բերել «Վերնատան» ընտրված միջոցառումներին՝ ծանոթացնելու նրանց հիմնադրամի միջավայրին՝ ելնելով միջոցառման ձևաչափից և տարողունակությունից:

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ «ԿԵՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԵՎ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Գործընկերները հնարավորություն ունեն միանալ «Կերոն» զարգացման հիմնադրամի լայն էկոհամակարգին՝ ներառյալ որոշ ծրագրեր, նախաձեռնություններ և նախագծեր մշակույթի, կրթության, տաղանդների զարգացման, նորարարության և տարածքային զարգացման ոլորտներում՝ ռազմավարական համապատասխանության դեպքում:

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ +374 41 505090
ՊՈՒՇԿԻՆԻ 38, ԵՐԵՎԱՆ, 0010
INFO@VERNATOUN.AM